Կ Ա Ր Ծ Ի Ք

Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության սեղմագրի վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը

Մ. Ա. Նավասարդյանի աշխատությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության տնտեսության արդյունավետության և որակի վերլուծությանը և գնահատմանը:

Ժամանակակից սոցիալական, տնտեսական և այլ բնույթի մարտահրավերները, գիտական շրջանակների մեթոդաբանական նոր մոտեցումները տնտեսական հիմնախնդիրներին և դրանց արդյունքում ձեռքբերված էմպիրիկ արդյունքները փաստում են, որ քաղաքականությունների մշակման տարբեր գործընթացներում լայնորեն կիրառվող համախառն ներքին արդյունքը կարող է տնտեսական իրականության թյուրըմբռնման և սխալ մեկնաբանման պատճառ հանդիսանալ: Մյուս կողմից նույնիսկ ոչ գիտական շրջանակներն արդեն բացահայտ նկատում են, որ տնտեսական աճի զուտ քանակական գնահատականները շատ հաճախ չեն զուգամիտում հասարակության բարեկեցության հետ:

Ուստի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, հատկապես այն պարագայում, որ տնտեսական աճի որակն ուսումնասիրվել է տնտեսական արդյունավետության համատեքստում: Վերջինս, հատկապես սահմանափակ ռեսուրսների պարագայում հասարակության պահանջմունքների աննախադեպ աճի պայմաններում տնտեսական աճը պայմանավորող հիմնական մակրոտնտեսական գործոնն է:

Ատենախոսության հիմնական գիտական նորույթը.

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների և արդյունքում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ՝ առանձնացվել են 5-ը:

- ✓ Պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար Մալմքվիսթի համաթվի և ստոխաստիկ սահմանի մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը:

- ✓ Մալմքվիսթի համաթվի միջոցով դուրս են բերվել ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականության կառուցվածքը բացատրող քանակական գնահատականները:
- ✓ Որոշվել է ՀՀ տնտեսության ճյուղային, ներճյուղային և տարածքային կենտրոնացվածության մակարդակներն ու գնահատվել դրանց փոխառնչությունը երկրի ՀՆԱ ծավալների փոփոխություններին:
- ✓ Մշակվել է տնտեսական արդյունքի որակի համաթվի հաշվարկման մեթոդաբանություն, որի հիման վրա գնահատվել է ՀՀ տնտեսության որակը, դրա դինամիկան, կայունությունը և կառուցվածքը:
- ✓ Մշակվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որը հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում, ինչպես նաև տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար մշակել հասցեական լուծումներ: Տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար մշակված համաթվի և մոդելի հիման վրա ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ կարելի է նաև իրականացնել համապատասխան սիմուլյացիաները և հետևել համակարգի վարքագծի փոփոխություններին:

<u>Ատենախոսության սեղմագրի հիմնական բովանդակությունը</u>

Սեղմագրում ամփոփ ներկայացված է ատենախոսության բովանդակությունը: Նախ ձևակերպվել են հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը, դրանց փորձարկումը և ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հետազոտության առաջին՝ «Տնտեսության արդյունավետության և որակի ուսումնասիրության տեսամեթոդաբանական հարցերն ու գնահատման միջազգային փորձը» գլխում քննարկվել են աշխատանքի հիմքում ընկած կարևորագույն գիտական եզրույթները և գիտական շրջանակների անդրադարձը դրանց, մասնավորապես՝ տեսական հիմքունքները, մեթոդական լուծումները և հիմնական էմպիրիկ արդյունքները:

Երկրորդ՝ «Տնտեսական արդյունավետության և տնտեսական աճի որակի գնահատումը» գլխում, երկու տարբեր եղանակներով հաշվարկվել է ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականությունը, դրա կառուցվածքը և դինամիկան: Նույն գլխում կենտրոնացվածության համատեքստում ուսումնասիրվել են նաև երկրի տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները, և վերջիններս համադրվել է երկրի տնտեսական

աճի: Երկրորդ գլխի շրջանակներում ներկայացվել է հեղինակի կողմից մշակված՝ տնտեսական արդյունքի որակի համաթվի հաշվարկման մեթոդաբանություն:

Հետազոտության երրորդ՝ «ՀՀ տնտեսության որակի վերլուծությունը և դրա բարելավման պլանավորումը» գլխում, վերլուծվել է գնահատված համաթիվը ՀՀ նյութերով, դրա դինամիկան, և կառուցվածքը:

Եզրակացություն

Աշխատանքի թեման արդիական է ՀՀ տնտեսության համար, և սեղմագիրը գրված է գիտական պատշաճ մակարդակով: Սեղմագրում ներկայացված՝ հետազոտության հիմնական արդյունքները նկարագրված են աղյուսակների և գծապատկերների միջոցով ևս: Սեղնագրի վերջում ներկայացված են իրատեսական առաջարկություններ ու եզրակացություններ: Աշխատանքում հեղինակի կողմից առաջադրված խնդիրները պատշաճ լուծում են ստացել:

Ատենախոսության սեղմագիրն իր բովանդակությամբ համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, և կարելի է արձանագրել, որ Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն և ավարտուն հետազոտություն է, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

«Արմբրոկ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն՝ Ա. Լ. Կայֆաջյան

«19» հուլիսի 2024թ.